ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՑ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ը ՉԵԽԻԱՅԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արման Պողոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Չեխիայի Հանրապետություն, 30.10.2019-01.11.2019թ.

4. **Հրավիրող կողմը.**

   Financial Times:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակը «Նորարարությունների և աճի համար ավելի լավ կարգավորումներ» խորագրով բիզնես կարգավորումների ֆորումին մասնակցությունն էր:

6. **Քննարկված թեմաները.**

Բանակցությունների ընթացքում քննարկվել են հարկային հարաբերությունների և գործարար միջավայրի կարգավորմանն առնչվող հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Ֆորումի ընթացքում հանդես եմ եկել «Հայաստանի Հանրապետությունում իրականացված հարկային բարեփոխումները» թեմայով ելույթով, որի ընթացքում ներկայացվել են ՀՀ հարկային օրենսդրության վերջին բարեփոխումները, գործարար միջավայրի և ազգային տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված քայլերը: Առանձին անդրադարձել եմ Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող Doing Business վարկանիշային ցուցակի «Հարկերի վճարում» ցուցիչով Հայաստանի Հանրապետության դիրքի նշանակալի բարելավմանը:

Աշխատանքային քննարկումներ են եղել Չեխիայի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալի և Սլովակիայի Հանրապետության նախկին փոխվարչապետի հետ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ֆորումի ընթացքում որոշումներ չեն կայացվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, ստորագրված փաստաթղթեր առկա չեն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

05.11.2019թ.